ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«09» Դեկտեմբերի 2016 թվականի № 45-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021ԹԹ-Ի ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին և 3րդ կետերով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հ.Հ օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կետով և 53-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքները՝ / կողմ-5; դեմ-0; ձեռնպահ-0 / համայնքի ավագանին.

որոշում է.

1.Հաստատել Նոր Աստղաբերդ համայնքի 2017-2021 թթ-ի զարգացման ծրագրերը:

2.Աշխատակազմի քարտուղարին՝ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

/Կցվում է զարգացման ծրագիրը/

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Նոր Աստղաբերդ համայնքի ավագանու անդամներ՝

Կողմ՝ _____ Մ.Թևանյան

Կողմ՝ _____ Ա.Իսրայելյան

Կողմ՝ _____ Մ.Հովհաննիսյան

Կողմ՝ _____ Ա.Թևանյան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի
Նոր Աստղաբերդ համայնքի ղեկավար՝ Ս.Թևանյան

2016 թվականի դեկտեմբերի 09, Նոր Աստղաբերդ համայնք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ

ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021ԹԹ. ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

Զ Ա Ր Գ Ա Ց Մ Ա Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

Կազմեց համայնքի ղեկավար՝ / /Ս.Թևանյանը

Հաստատվել է համայնքի ավագանու նիստում

09.դեկտեմբերի.2016թ. թիվ 45Ն որոշմամբ

ՆՈՐ ԱՍՏՂԱԲԵՐԴ 2016Թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 3

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն 4

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն 5

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը 6

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը 7

2.4. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները 8

2.5. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ 9

2.6. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈՒԹՀՍ) վերլուծություն 10

3.Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում 12

3.1. Համայնքի զարգացման տեսլական 12

3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ 13

4.ՀԶԾ ֆինանսավորում 19

5.ՀԶԾ մոնիթորինգ 19

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզում, Կապանի շրջանում, մարզկենտրոնից 43 կմ հյուսիս-արևմուտք, Գեղի գետի վերին հոսանքի ձախ ափին:

Նոր Աստղաբերդի բնակավայրերը թվարկվում են մ.թ.ա. 9-10-րդ դարերում: Դարեր ի վեր եղել են հայկական բնակավայրեր: Այդ են վկայում նշված համայնքի տարածքում գտնվող եկեղեցիների և ամրոցների ավերակները, գյուղատեղիների հետքերը: Բնակավայրերը բնակեցված էին ադրբեջանցիներով, իսկ 1990-ից այն բնակեցվել է փախստականներով և տեղացի բնակիչներով:

Համայնքում կա 57 առանձնատուն՝ 5010 քմ. տարածքով: Բնակիչների մեծ մասը անապահով և կարիքավոր ընտանիքներ են, բնակվում են կիսավթարային շենքերում, որոնք տնտեսական ճգնաժամի պատճառով չեն վերանորոգվում:

Համայնքի բոլոր գյուղերը սահմանամերձ են, բարձրությունը՝ 1650-2000մ:

ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, և համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները՝ մասնավորպես բնակչության կյանքի բարելավում, ինչես նաև առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- Համայնքի ֆինանսական կարողությունը,
- Համայնքի բնակչության թվաքանակը,
- Համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները,
- Համայնքում առկա վտանգները/ռիսկերը/:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1Համայնքի ընդհանուր նկարագրություն

Նոր Աստղաբերդ համայնքի տարածքը կազում է `2830,07 հա: Համայնքի տարածքը մասնատված է բարձր լեռների, սարավանդների ու խորը գետահովիտների բարդ համադրության, որի երկրաբանական և կլիմայական պայմանները նպաստում են վտանգավոր երկրաբանական երևույթների զարգացմանը: Կլիմայական պայմանները՝ բարեխառն, ցուրտ ձմեռ, համեմատաբար խոնավ եղանակ:

Համայնքի կազմի մեջ մտնում են 4 բնակավայր՝ Գետիշեն /նախկին Չայքենդ/, Նոր Աստղաբերդ /նախկին Փայահան/, Աջաբաջ և Ոչեթի:

Գետիշեն գյուղը գտնվում է մարզկենտրոնից 28 կմ, իսկ պետական սահմանից՝ 33 կմ հեռավորության վրա: Գյուղը բնակեցված է Կապանից տեղափոխված բնակիչներով:Գյուղի բնակչության թիվը կազմում է 53 մարդ, որից արական սեռի ներկայացուցիչներ՝ 27, իսկ իգականը՝ 26 մարդ: Բնակելի տների թիվը կազմում է 20 տուն: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1650 մետր:

Նոր Աստղաբերդ գյուղը գտնվում է մարզկենտրոնից 32 կմ, իսկ պետական սահմանից՝ 28 կմ հեռավորության վրա::Գյուղի բնակչության թիվը կազմում է 49 մարդ, որից արական սեռի ներկայացուցիչներ՝ 27, իսկ իգականը՝ 22 մարդ: Բնակելի տների թիվը կազմում է 21 տուն: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1750 մետր:

Աջաբաջ գյուղը գտնվում է մարզկենտրոնից 40 կմ, իսկ պետական սահմանից՝ 25 կմ հեռավորության վրա::Գյուղի բնակչության թիվը կազմում է 23 մարդ, որից արական սեռի ներկայացուցիչներ՝ 14, իսկ իգականը՝ 9 մարդ: Բնակելի տների թիվը կազմում է 6 տուն: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 2000 մետր:

Ոչեթի գյուղը գտնվում է Գեղի գետի աջ ափին, մարզկենտրոնից 30 կմ հյուսիս-արևմուտք: Գյուղում պահպանվել են հին հայկական գերեզմանոցների, եկեղեցիների ավերակներ, քանդված տներ, այդ իսկ պատճառով էլ այնտեղ մարդիկ բնակություն չեն հաստատել: Բարձրությունը ծովի մակերևույթից կազմում է 1740 մետր:

Համայնքի զբաղեցրած տարածքը հետևյալն է՝

Համայնքի վարչական տարածքը՝	2830,07 հա, որից՝
Վարելահողեր	6,90 հա
Խոտհարք	52,50 հա
Արոտավայրեր	1454,13 հա
Անօգտագործելի հողեր	762,27 հա
Ջրերի տակ	7,06 հա
Դաշտային ճանապարհներ	3,21 հա
Անտառներ	212,90 հա
Թփուտներ	263,83 հա
Գերեզմանոցներ	0,69 հա
Պտղատու այգիներ	2,8 հա
Տնամերձ հողեր	62,56 հա
Գյուղամիջյան փողոցներ	1,22 հա

Բնակչության սոցիալական կազմը հետևյալն է՝

	Գետիշեն		Նոր Աստղաբերդ		Աջաբաջ		Ընդամենը	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Երեխաներ (0-6 տ)	2	-	1	1	1	1	4	2
Դպրոցականներ (7-17 տ)	1	1	-	-	1	-	2	1
18- 62 տարեկան	20	17	22	16	10	6	52	39
63 և ավելի	4	8	4	5	2	2	10	15
Որից՝								
Թոշակառուներ	4	6	3	4	6	2	13	12
Հաշմանդամներ	2	1	1	1	1	1	4	3

2.2 Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն 7544800 ՀՀ դրամ է, իսկ ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝ կազմում է 51,45%:

Համայնքի ձեռնարկություններ են հանդիսանում՝ <<Լեռ-Էքս-Էներգիա>> ՍՊ ընկերությունը, որը արտադրում է էներգիա և սպառումը իրականացնում է տեղում, <<Լեռ-Էքս>> ՍՊ ընկերությունը, որի աշխատանքները այս պահի դրությամբ դադարեցվել են և, որը արդյունահանում և մշակում էր պղինձ-մոլիբդեն և <<Գեղի Գոլդ>> ՍՊ ընկերությունը որը ձեռք է բերել լեռնահարստացման լիցենզիա, որից հետո էլ պետք է կնքվեն համայնքի հետ սերվիտուտի պայմանագրեր երկրաբանահետախուզական աշխատանքների համար: Համայնքում այլ սպասարկման ծառայություններ չեն գործում,:

Համայնքի բնակիչները հիմնականում զբաղվում են անասնապահությամբ, դաշտավարությամբ և մեղվաբուծությամբ: Համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանք են հանդիսանում՝ մսամթերքը, կաթնամթերքը, բանջարաբոստանային կուլտուրաները և մեղրը:

2016 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա անասնագլխաքանակը հետևյալն է՝

Անվանում	Չափի միավոր	Քանակը
Խոշոր եղջերավոր անասուններ, որից՝	գլուխ	135
կովեր	գլուխ	66
Մանր եղջերավոր անասուններ, որից	գլուխ	320
Այծեր	գլուխ	10
ոչխարներ	գլուխ	310
Թռչուններ,որից	Թև	320
հավեր	Թև	154
Ձիեր, ավանակներ	գլուխ	8
Մեղվաընտանիքներ	փեթակ	396

2016 թվականի ընթացքում արտադրվել է՝

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Ցանքսը /հա/	Չափի միավորը	Քանակը	Միջինը
կարտոֆիլ	6	ցենտներ	960	160
բանջարեղեն	1,4	ցենտներ	170	236
Պտուղ և հատապտուղ	7,8	ցենտներ	21	2,7

Գյուղատնտեսական արտադրանքի տեսակը	Չափի միավորը	Քանակը
Կաթ	Լիտր	142560
Միս	Տոննա	1,5
Բուրդ	կգ	300
Ձու	հատ	7000
Մեղր	կգ	5000

Համայնքում զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ չկան: Դպրոցական, նախադպրոցական և այլ կրթական հաստատություններ ևս չկան: Համայնքում գործում է բուժկետ: Բուժկետում աշխատում է 1 բուժքույր: Ունի գույք, որը գտնվում է բավարար վիճակում:

Ընտանեկան նպաստների համակարգում գրանցված է 3 մարդ:

2.3 Համայնքում իրականացվող ծրագրերը

Համայնքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար բյուջեների ֆինանսական համահարթեցման նպատակով նախատեսվում է տարեկան 18695000 ՀՀ դրամ դոտացիա, որն էլ նախատեսվում է ապարատի պահպանման և նրա ծախսերի համար:

Նոր Աստղաբերդ համայնքը գալիք հինգ տարիների ընթացքում հարևան համայնքների հետ համատեղ նպատակային ծրագրեր և միջոցառումներ չի պլանավորում:

Նոր Աստղաբերդ համայնքում միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների,արտասահմանյան երկրների համայնքների կողմից իրականացվող ծրագրեր և միջոցառումներ՝ <<Զանգեզուր արգելավայր>> ՊՈԱԿ-ի կողմից՝ խմելու ջրագծի կառուցում, որի արդյունքում համայնքի բնակչության 40 %-ը կապահովվի ջրով, կցանվեն տարբեր մշակաբույսեր, բնակչության ներգաղթ:

Տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրեր չկան: Համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող ծրագրեր և ներդրումներ չկան:

2.4 Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են 2016 թվականի բյուջեի ֆինանսական միջոցների վերլուծությունը և գալիք հինգ տարիների կանխատեսումները:

Եկամտային մաս	Ելակետային տարի 2016	2017	2018	2019	2020	2021
Ընդամենը եկամուտներ	7544.8	7917,5	7917,5	7917,5	7917,5	7917,5
Հողի հարկ	130.0	130,0	130,0	130,0	130,0	130,0
Գույքահարկ	95.0	95,0	95,0	95,0	95,0	95,0
Հողի վարձակալություն	2733.1	3953,4	3953,4	3953,4	3953,4	3953,4
Դոտացիա	3500.0	3500,0	3500,0	3500,0	3500,0	3500,0
սուբվենցիա	162.6	239,1	239,1	239,1	239,1	239,1
Այլ մուտքեր	200.0	-	-	-	-	-
Ծախսային մաս	7544,8	7917,5	7917,5	7917,5	7917,5	7917,5
Ընդամենը ծախսեր						
Ապարատի պահպանում	6420,0	6420,0	6420,0	6420,0	6420,0	6420,0
Արտաքին լուսավորություն	100,0	100,0	100,0	100,0	100,0	100,0
Պահուստային ֆոնդ	1115,5	1115,5	1115,5	1115,5	1115,5	1115,5

Նոր Աստղաբերդ համայնքի զարգացման ծրագրով նախատեսված ծրագրերի իրականացման համար ֆինանսական միջոցները կհատկացվեն միջազգային կազմակերպությունների կողմից: